<<ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՄԻԱՀԱՐԿ ՀԱՏՎԱԾԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ՎԵՐՆԱՀԱՐԿԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N <<ԳՀԱՇՁԲ-2020/1-ԵՊԲՀ>>

ք. Երևան <<____>>_____ 20____թ.

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը, ի դեմս ռեկտոր **Ա. Ա. Մուրադյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ>> ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Գ. Բեզիրջյանի**, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **լաբորատոր մասնաշենքի միահարկ հատվածամասերի վրա վերնահարկի ավելացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի <<Էլեկտրոնային գնումներ>> բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում, Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի <<Օրենսդրություն>> բաժնի <<Ֆինանսների նախարարի հրամաններ>> ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **տասն** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **3200000 (երեք միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)** տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի **0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական)** տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին.

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի **0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական)** տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի <<Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ>> բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է **11 (տասնմեկ)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<<ՊԱՎԻՐԱՏՈՒ>>	<<ԿԱՏԱՐՈՂ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ	**<<ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ>> ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	**Հասցե՝ ք. Երևան, Բյուզանդի 1/3**
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ	**Բանկ՝ <<Էվոկաբանկ>> ՓԲԸ**
Հ/Հ 11500166513800	**Հ/Հ 1660001274300100**
ՀՎՀՀ 01503448	**ՀՎՀՀ 02707077**
	Էլ. փոստ՝ aramnik@mail.ru
	Հեռ. 094-81-22-25
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	**Տնօրեն՝ Գ. Բեզիրջյան**
(ստորագրությունը)	**(ստորագրությունը)**
Կ.Տ	**Կ.Տ**

Digitally signed by BEZIRJYAN GEVORG 1308810806
Date: 2020.05.15 14:40:04 GMT+04:00

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.05.19 15:45:17 AMST

Հավելված թիվ 1
<<____>>_____20_____թ. կնքված
<<ԳՀԱՇՁԲ-2020/1-ԵՊԲՀ>> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը
1	71241200/1	Լաբորատոր մասնաշենքի միահարկ հատվածամասերի վրա վերնահարկի ավելացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ*	դրամ	3200000	3200000	1	ք. Երևան, Կորյունի 2	Պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օր

*Ընդհանուր նկարագրություն

1	Շինարարության նկարագիրը	Լաբորատոր մասնաշենքի միահարկ հատվածամասերի վրա վերնահարկի ավելացում ք. Երևան Կորյունի 2
2	Ավելացվող մակերեսը	շուրջ 1306 ք/մ /ներառյալ լաբորատոր մասնաշենքի մի հատվածի հետ ֆունկցիոնալ կապվող մակերեսները/
3	Բարեկարգվող հողամասի մակերեսը	-
4	Անհրաժեշտ սենյակների կազմը	Համաձայն կից ներկայացված հավելվածի

Նախագծման ելակետային տվյալներ
1. Անշարժ գույքի սեփականության վկայական
2. Նախագծման տեխնիկական առաջադրանք
3. Մեկ հարկանի կցակառույցի և դահլիճային մասնաշենքի տեխնիկական վիճակի և դրանց վրա լրացուցիչ մեկ հարկ ավելացնելու հնարավորության մասին «ՔԾՓԿ» ԲԲԸ-ի կողմից 03.06.2019թ. տրված տեխնիկական եզրակացությունը:
4. Երևանի քաղաքապետի կողմից վերնահարկի ավելացման համար 23.07.2019թ. տրված հ.01/18-07/2-57817-703 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք):
5. Սխեմատիկ նյութեր և լուսանկարներ 4 թերթ:
6. Նախատեսվող սենյակների կազմը համաձայն Հավելվածի

Նախագծման առաջադրանք

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի լաբորատոր մասնաշենքի մեկ հարկանի կցակառույցը և հարակից դահլիճային մասնաշենքի հիմնական ճակատներն ուղղված են դեպի Հերացի փողոց: Նախատեսվում է նախագծել գիտահետազոտական կենտրոն՝ լաբորատոր և գրասենյակային տարածքներով, ինչպես նաև ընթերցասրահ /քննադահլիճ/:

Կառուցման համար նախագծերում ընդգրկել հետևյալ աշխատանքները.

- Իրականացնել նախագծվող հատվածի մանրամասն չափագրություն, քանդման աշխատանքների մանրամասն գծագրեր, հիմնանորոգվող հարկաբաժինների, ճարտարապետաշինարարական, կոնստրուկտորական, անհրաժեշտության դեպքում ուժեղացման, ինչպես նաև ինժեներական ներքին ցանցերի մոնտաժման գծագրերի մշակում (ջրամատակարարում, կոյուղի, էլեկտրամատակարարում, օդափոխություն և օդորակում (ներածման և արտածման), թույլ լարման ցանցեր՝ ըստ ցանկի, արտաքին ինժեներական գծերի նորոգում կամ փոխարինում (ըստ անհրաժեշտության), իրականացնել նախատեսվող վերնահարկի եռաչափ մոդելավորում գունային և հարդարման նյութերի առկայությամբ:
  - **Անհրաժեշտության դեպքում իրականացնել սեյսմազինվածության բարձրացման կամ մասնակի ուժեղացման նախագիծ՝ համաձայն սեյսմիկ եզրակացության**
  - **Չափագրման մանրամասն գծագրեր և քանդվող նյութերի մասնագրեր**

- **Շենքի կոնստրուկտորական գծագրեր**
- **Ճարտարապետաշինարարական մաս**
- **Շինարարության կազմակերպման նախագիծ**
- **Գլխավոր հատակագիծ՝ կից ճարտարապետաշինարարական մասին**
- **Ինժեներական մաս՝**
  - ներքին ջրամատակարարման, հրդեհաշիջման և ջրահեռացման ցանցերի, ներքին էլեկտրամատակարարման ցանցի և ջեռուցման համակարգի փոխարինում
  - Նոր հակահրդեհային ահազանգման ցանցի իրականացում
  - Նոր հեռախոսային և համակարգչային ցանցերի իրականացում, հեռահաղորդակցության հնարավորությամբ. համակարգչային ցանցը կցել գոյություն ունեցող ցանցին
  - Նոր տեսահսկման համակարգի իրականացում
  - Նախատեսել օդորակում և օդափոխություն բոլոր սենյակներում ներածման և արտածման համակարգերի միջոցով
  - Անհրաժեշտության դեպքում արտաքին ինժեներական ցանցերի փոխարինում և/կամ նորոգում:

- **<u>Այլ պահանջներ տարբեր լուծումներին և նյութերին</u>**

- Նախատեսել գլխավոր ճակատների ճարտարապետական արդի լուծումներ և ժամանակակից նյութեր, հնարավոր է լայն ապակեպատ բացվածքներով հերմետիկ փակվող և առանձին հատվածներում նաև բացվող պատուհաններ: Բոլոր նյութերը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ էսքիզային նախագծի տեսքով
- Նախատեսել շենքի հիմնանորոգվող հատվածի արտաքին հարդարման աշխատանքներ (ծավալը և նյութերը համաձայնեցնել պատվիրատուի հետ)
- Ապահովել առնվազն երկու տեղից ֆունկցիոնալ կապ կառուցվող վերնահարկի /միջանցքից/ և լաբորատոր մասնաշենքի համապատասխան հարկաբաժնի /անհրաժեշտության դեպքում հարկաբաժինների/ հետ, որը ենթակա է նախապես համաձայնեցման պատվիրատուի հետ
- Ապահովել սակավաշարժ հաշմանդամ խմբերի տեղաշարժը առաջին հարկում և ուղղահայաց ուղությամբ՝ վերելակի միջոցով
- Սակավաշարժ հաշմանդամ խմբերի համար նախատեսել ս/հ
- Վերելակներ տեղադրելու դեպքում (ցանկալի է առանց մեքենայական սենքի), նախագծի տվյալ մասը համաձայնեցնել ՀՀ ԱԻՆ տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի հետ
- Նախատեսել սանիտարական պարագաներ, ցուցանակներ և շերտավարագույրներ
- Նախատեսել PVC ֆոլգայապատ կախովի առաստաղներ «Արմսթրոնգ» տիպի
- Լուսատուները նախատեսել LED տիպի՝ նվազագույնը 48.000 ժամ անխափան աշխատանքի բնութագրին համապատասխան
- Նախատեսել լաբորատոր սենյակներում և դրանց սպասարկող միջանցքներում հակաբակտերիալ ծածկույթով /վինիլե/ հատակներ, իսկ գրասենյակային տարածքներում լամինատե հատակներ, ս/հ-ներում՝ կերամիկական սալեր և/կամ խեցեսալեր
- Դռները լաբորատոր սենյակներում նախատեսել ապակի ալյումինե շրջանակով /1500սմ լայնությամբ/
- Աստիճանավանդակներում նախատեսել ալյումինե փոշեներկված կամ մետաղական դեկորատիվ բռնաձողեր
- Աստիճանաքայլելը և աստիճանահարթակները նախատեսել գրանիտե կամ համարժեք քարերով երեսապատում
- Պատերը հարդարել հիմնականում լատեքսային ներկերով և թաց կետերում հախճասալիկներով
- Նախատեսել պատերի պաշտպանիչ լամինատե կամ ՄԴՖ բազրիքներ՝ համաձայն կահավորման գծագրերի
- Ուժեղացման աշխատանքները նախատեսել համաձայն «ՔԾՓԿ» ԲԲԸ-ի կողմից 03.06.2019թ. տրված տեխնիկական եզրակացության և ՀՀ-ում գործող շինարարական նորմերի
- Նախատեսել թեքահարթակներ հաշմանադամություն ունեցող անձանց տեղաշարժը ապահովելու համար
- Անհրաժեշտ է պահպանել Հավելված նշված սենյակների կազմի ֆունկցիոնալ փոխկապակցված հերթականությունը՝ ըստ ցանկի համարակալման: Դրանց մակերեսները ենթակա են մինչև 10% փոփոխման և ճշգրտման նախագծման փուլում՝ աշխատանքային կարգով համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

<u>Նախագծի կազմը</u>

- ✓ բացատրագրեր, մասնագրեր, հատակագծեր, կտրվածքներ, պրոֆիլներ, հանգույցներ, կահավորման մանրամասն գծագրեր ըստ նախագծի իրականացվող աշխատանքների մանրամասն ծավալներ, այդ թվում՝ ծավալաթերթի տեսքով նախահաշիվ և աշխատանքների իրականացման ժամանակացույց և շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ
- ✓ նախագիծը համաձայնեցնել ՀՀ ԱԻՆ հակահրդեհային պետական տեսչության հետ
- ✓ նախագիծը համաձայնեցնել Երևանի քաղաքապետարանի հետ
- ✓ նախագիծը համաձայնեցնել բոլոր շահագրգիռ մարմինների և կառույցների հետ
- ✓ նախագիծը իրականացնել համաձայն ՀՀ-ում գործող քաղաքաշինական նորմատիվ իրավական ակտերի, հասարակական ու կրթական նշանակության շենքերի նախագծման դրույթներին համապատասխան

Այլ պահանջներ

1. Նախագիծը ներկայացնել **հայերեն և ռուսերեն լեզուներով,** վեց օրինակից թղթային և էլեկտրոնային PDF ու AutoCAD կամ AutoDesk ֆորմատային տարբերակներով /թվային կրիչով/
2. Նախահաշիվը ներկայացնել **հայերեն և ռուսերեն լեզուներով,** 4 թղթային օրինակից և միաժամանակ ծավալաթերթ էլեկտրոնային, էքսել տարբերակով
3. Շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան
4. Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները
5. Ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը
6. Նախագիծը պետք է համապատասխանի ՀՀ շինարարական նորմերին:

Հավելված

Հ/Հ	ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԸՍՏ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ	ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ՍԵՆՅԱԿՆԵՐՆ՝ ԸՍՏ ՄԱԿԵՐԵՍԻ
1.	Կենդանանոց	1 սենյակ	36.0 քմ
2.	Կենդանանոց - կարանտին	2 սենյակ	ընդհանուր 25.0 քմ
3.	Նախաբոքս - վարքայինի	1 սենյակ	10 քմ
4.	Վարքային (շարժական միջնապատ)	1 սենյակ	40.0 քմ
5.	Վարքայինի ղեկավարում - հսկում	1 սենյակ	16.0 քմ
6.	Էլեկտրաֆիզիոլոգիա	1 սենյակ	26.0 քմ
7.	Պահեստ	1 սենյակ	15.0 քմ
8.	Միջանկյալ սենյակ	1 սենյակ	30.0 քմ
9.	Նախավիրահատարան-լվացարան	1 սենյակ	8.0 քմ
10.	Վիրահատարան	1 սենյակ	30.0 քմ
11.	Սառցարանային	1 սենյակ	12.0 քմ
12.	Մորֆոլոգիա	1 սենյակ	10.0 քմ
13.	Բջջային կուլտուրաներ	1 սենյակ	18.0 քմ
14.	Գենային ինժեներիա	1 սենյակ	18.0 քմ
15.	Նախաբոքս	1 սենյակ	12.0 քմ
16.	Հատուկ նյութերի ներարկման սենյակ	1 սենյակ	18.0 քմ
17.	Կենսաքիմիա	1 սենյակ	32.0 քմ
18.	ՊՇՌ սենյակ	1 սենյակ	16.0 քմ
19.	Անալիտիկ հետազոտությունների սենյակ	1 սենյակ	20.0 քմ
20.	Տվյալների հավաքագրում	1 սենյակ	16.0 քմ
21.	Լաբորատոր հատվածի լվացարան, լոգարան, սանհանգույց	1 սենյակ	20.0 քմ
22.	Կաֆետերիա	1 սենյակ	24.0 քմ
23.	Ընդհանուր սանհանգույց	1 սենյակ	20.0 քմ
24.	Ուսանողական լաբորատորիա	1 սենյակ	30.0 քմ
25.	Ուսանողական սենյակ	1 սենյակ	30.0 քմ
26.	Դահլիճ	1 սենյակ	36.0 քմ
27.	Գիտաշխատողների սենյակ	2 սենյակ	ընդհանուր 40.0 քմ
28.	Տրանսֆեր սենյակ	1 սենյակ	30.0 քմ
29.	Ադմինիստրատիվ սենյակ	1 սենյակ	18.0 քմ
30.	Ղեկավարի աշխատասենյակ	1 սենյակ	30.0 քմ
31.	Ընթերցասրահ /քննադահլիճ/	-----	
32.	Միջանցք /բոլոր սենյակները սպասարկող/	-----	

- Աշխատանքի կատարման ժամկետը սահմանվում է պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օր, որը ներառում է աշխատանքային նախագծի մշակման գործընթացը, ընթացիկ և վերջնական համաձայնեցումները, ինչպես նաև ամփոփ ՆՆՓ փաստաթղթերի հանձնումը:

- Նախագծող կազմակերպությունը բոլոր աշխատանքները պետք է իրականացնի սեփական միջոցներով՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով համապատասխան մասնագետների և լիցենզավորված այլ կազմակերպությունների:

Նախագծման աշխատանքների ամբողջ ընթացքում նախագծողը բոլոր քայլերը, լուծումները և նյութերը պետք է համաձայնեցնի նախագծող կազմակերպության հետ, սակայն որը չի հակասելու ՀՀ-ում գործող շինարարական նորմերին և կանոններին:

<<ՊԱՎԻՐԱՏՈՒ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN
2007720078
Date: 2020.05.19 15:45:49 AMST

<<ԿԱՏԱՐՈՂ>>
<<ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Բյուզանդի 1/3
Բանկ՝ <<Էվոկաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1660001274300100
ՀՎՀՀ 02707077
Էլ. փոստ՝ aramnik@mail.ru
Հեռ. 094-81-22-25

Տնօրեն՝ Գ. Բեզիրջյան

Digitally signed by BEZIRJYAN GEVORG
1308810806
Date: 2020.05.15 14:41:06 GMT+04:00

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված թիվ 2
<<____>>_____20_____թ. կնքված
<<ԳՀԱՇՁԲ-2020/1-ԵՊԲՀ>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/1	Լաբորատոր մասնաշենքի միահարկ հատվածամասերի վրա վերնահարկի ավելացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	0	0	0	0	0	3200000	3200000	3200000	3200000	3200000	3200000	3200000	3200000

***Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ փաստացի կատարված աշխատանքների:**

<<ՊԱՎԻՐԱՏՈՒ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.05.19 15:46:19 AMST

<<ԿԱՏԱՐՈՂ>>
<<ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Բյուզանդի 1/3
Բանկ՝ <<Էվոկաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1660001274300100
ՀՎՀՀ 02707077
Էլ. փոստ՝ aramnik@mail.ru
Հեռ. 094-81-22-25

Տնօրեն՝ Գ. Բեզիրջյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by BEZIRJYAN GEVORG 1308810806
Date: 2020.05.15 14:41:46 GMT+04:00

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն